

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1332-Ն ՈՐՈՇՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ

Ծանոթագրություն՝ ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման 2-րդ հավելվածով նախատեսված 2020 թվականին ակնկալվող արդյունքը (ներառյալ՝ վերստուգիչ ցուցանիշը) նախատեսված է փարեկան կտրվածքով: Դրանով պայմանավորված միջոցառումների մեծ մասի կարգավիճակը նշված է որպես «կատարված է մասնակի»:

N	Միջոցառումը	2020 թվականի ակնկալվող արդյունք	Կատարված աշխատանքներ	Պատասխանատու մարմինը	2020թ. վերստուգիչ ցուցանիշի բովանդակությունը (առկայության դեպքում)	Կատարման կարգավիճակը (2020 թվականի առաջին կիսամյակ) ¹
1.	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն	Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է	2020 թվականի մարտի 25-ին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ	ՀՀ արդարադատության նախարարություն Վարչապետի աշխատակազմ	2020թ.-ին Հանձնաժողովն ունի բավարար շենքային, նյութական	Կատարված է՝ ակնկալվող արդյունքի մասով

¹ Սույն աղյուսակում նշվում է հետևյալ հնարավոր պատասխաններից մեկը՝

- Կատարված է
- Կատարված է մասնակի
- Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է
- Կատարված չէ

	<p>գործունեության ապահովում</p>	<p>առաջարկությունների փաթեթ՝ ուղղված Հանձնաժողովի գործառույթների շրջանակների ընդլայնմանը:</p>	<p>կատարելու մասին» նախագծերի փաթեթի շրջանակում ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որն ուղղված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթների շրջանակի ընդլայնմանը: Մասնավորապես՝ Հանձնաժողովն իր գործունեությունն արդյունավետ իրականացնելու նպատակով օրենսդրական հիմքով հասանելիություն է ստացել ֆինանսական տեղեկություններին: Ընդլայնված գործառույթների շրջանակը ներառում է նաև դատավորների թեկնածուների հավակնորդների, Սահմանադրական դատարանի դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված այլ անձանց բարեվարքության ստուգման մեխանիզմները: Վերոգրյալից կարող ենք ենթադրել, որ 2020 թվականին ակնկալվող արդյունք</p>	<p>ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ)</p> <p>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)</p>	<p>պայմաններ, աշխատակազմի առնվազն 70%-ը համալրված են, բյուջեի նախագծում և ՄԺԾ-ում նախատեսվել է առանձին տող ԿԿՀ-ի ֆինանսավորման համար (2019), ապահովվել է ԿԿՀ-ի կողմից ԱԺ-ում բյուջեի նախագիծը և կատարման հաշվետվությունը ներկայացնելու օրենսդրական հիմքը:</p>	<p>Կատարված է մասնակի՝ վերստուգիչ ցուցանիշի մասով</p>
--	---------------------------------	---	--	---	---	---

			<p>նախատեսող՝ Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկությունների փաթեթի մշակումից բացի մեկ քայլ առաջընթաց է արձանագրվում՝ հաշվի առնելով, որ մշակված օրենսդրական նախագիծը ընդունվել է և գործում է:</p> <p>Հարկ է նշել, որ միջոցառման վերստուգիչ ցուցանիշը թեև նախատեսված է 2020թ դեկտեմբերի դրությամբ, այնուամենայնիվ որոշակի աշխատանքներ արդեն իսկ իրականացվել են՝</p> <p>Հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովման նպատակով: ՀՀ Կառավարության որոշմամբ Հանձնաժողովին հատկացվել է Երևան քաղաքի Կորյունի 15-17-19 հասցեում գտնվող 3-րդ մասնաշենքի 1112.1 քառ. մետր մակերեսով տարածքը, որն այս պահին դեռևս գտնվում է վերանորոգման աշխատանքների մեջ:</p>			
2.	Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման,	Առաջարկությունների հիման վրա մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել	ՀՀ արդարադատության նախարարությունը մշակել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից	ՀՀ արդարադատության նախարարություն	Հակակոռուպցիոն մարմնի ձևավորման վերաբերյալ	Կատարված է մասնակի

	<p>քննության գործառնություններով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում</p>	<p>Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթը:</p>	<p>օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը: Նախագծերը ներկայացվել են հանրային քննարկման և հասանելի են հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/2256: Նախագծերն ուղարկվել են պետական մարմիններին և միջազգային կազմակերպություններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա ներկայումս նախագծերը գտնվում են լրամշակման փուլում:</p>	<p>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ ոստիկանություն</p> <p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>օրենսդրական նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով (2020թ.)</p>	
3.	<p>Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում</p>	<p>Մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ձևավորմանն ուղղված օրենսդրական նախագծերի փաթեթ՝ սահմանելով որպես ժամանակավոր լուծում հակակոռուպցիոն գործերով մասնագիտացված դատավորների ինստիտուտի ներդրումը: Ներդրվել է</p>	<p>Բազմաթիվ հանդիպումների ընթացքում քննարկվել են մասնագիտացված դատարանների ստեղծման վերաբերյալ առաջարկությունները: Մասնագիտացված դատարանների ստեղծմանն ուղղված օրենսդրական նախագծերի փաթեթը մշակվել է, ներկայացվել է միջազգային փորձաքննության՝ ԱՄՆ դեսպանատան համապատասխան գրասենյակներին: Հակակոռուպցիոն</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ)</p> <p>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</p> <p>Արդարադատության ակադեմիա</p>	<p>Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների փորձի ուսումնասիրության վերլուծությունը համապատասխան առաջարկություններով ներկայացվել ու քննարկվել են Հակակոռուպցիոն խորհրդում (2020թ.-ի 1-ին եռամսյակ) Օրենսդրական փաթեթը</p>	<p>Կատարված է մասնակի</p>

		<p>հակակոռուպցիոն գործերով մասնագիտացված դատավորների ինստիտուտը:</p>	<p>քաղաքականության խորհրդի 2020 թվականի հուլիսի 3-ին կայացած նիստի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, ներկայացվել են նաև հակակոռուպցիոն դատարանների ստեղծմանն առնչվող հարցեր:</p> <p>Հարկ է նշել, որ 2020 թվականի հունիսի 25-ին ՀՀ Ազային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունվեց «Հայաստանի Հանրապետության ն դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից կարող է ընտրել դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, քննում են առանձին տեսակի, այդ թվում՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին գործեր:</p> <p>Վերոգրյալ իրավակարգավորումները փաստում են մասնագիտացված դատավորների ինստիտուտի ներդրման փաստի մասին:</p>		<p>նախագծվել է, քննարկվել է շահառուների հետ, ենթարկվել է միջազգային փորձաքննության (2020թ.-ի 2-րդ եռամսյակ)</p>	
4.	ՀՀ Գլխավոր դատախազություն	Առաջարկությունների փաթեթի հիման վրա	Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել	ՀՀ Գլխավոր դատախազություն	Գլխավոր դատախազություն	Կատարված է

	<p>նում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծում</p>	<p>մշակվել է և ընդունվել է օրենսդրական փաթեթ:</p>	<p>համապատասխան առաջարկությունների փաթեթը: Արդարադատության նախարարությունը ՀՀ Գլխավոր դատախազության հետ համատեղ քննարկել է Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծմանն ուղղված առաջարկությունները: Առաջարկությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Արդյունքում, ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի «ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանով ստեղծվել և գործում է ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը:</p>	<p>(համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն Արդարադատության ակադեմիա</p>	<p>ում ստեղծվել է կոռուպցիոն գործերով մասնագիտացված ստորաբաժանում</p>	
5.	<p>Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան</p>	<p>ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության</p>		<p>Կատարված է մասնակի</p>

	<p>պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում</p>	<p>համապատասխան ստորաբաժանման կարողությունները գնահատվել են: Ոլորտային հասարակական կազմակերպությունների կարողությունները գնահատվել են: Կարողությունների գնահատման արդյունքում Հակակոռուպցիոն քաղաքականության առավել արդյունավետ մշակման և իրականացմանն ուղղված առաջարկությունները ներկայացվել են:</p>	<p>ստորաբաժանման կարողությունների գնահատման արդյունքում ստեղծվել է մասնագիտացված ստորաբաժանում, այն է՝ Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն: Վարչության կանոնադրությունը հասանելի է հետևյալ հղումով՝ http://moj.am/storage/uploads/Have_lvac_1.anticorruption.pdf : Հակակոռուպցիոն քաղաքականության առավել արդյունավետ մշակման և իրականացման նպատակով ներկայումս աշխատանքներ են իրականացվում առաջարկությունների փաթեթի մշակման ուղղությամբ: Մինևույն ժամանակ, կարևորելով ոլորտային հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացման ուղղությամբ աշխատանքների կատարման առաջնահերթությունը, ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրություն է ուղարկվել հակակոռուպցիոն ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններին:</p>	<p>Նախարարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>		
--	---	---	---	---	--	--

6.	Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում	Յուրաքանչյուր տարի Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն անց է կացնում 1 նիստ՝ նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը:	Հարկ է նշել, որ երկրում տեղծված արտակարգ դրության պատճառով միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությունը իրականացվում է հեռահար եղանակով: Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ իրականացվում են ինչպես առանձին հանդիպումներ, այնպես էլ համատեղ քննարկումներ՝ ֆինանսավորման և աշխատանքների կատարման կրկնությունից խոսափելու նպատակով:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ		Կատարված է մասնակի
7.	15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերահսում, ծրագրերի մշակում և իրականացում	Մշակվել է տեղական ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանություն: Մեթոդաբանության հիման վրա 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվել են ռիսկերի համապարփակ գնահատումներ	Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել է «Հանրային բարեվարքությունը և էթիկան տեղական կառավարման համակարգում» խորագրով համաժողով, որի նպատակն էր բարելավել Հայաստանում տեղական ժողովրդավարության որակը, բարձրացնել քաղաքացիների վստահությունը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ՝ ապահովելով վերջիններիս հաշվետվողականությունը, արդյունավետությունը և	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	Ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը հաստատվել է ԿԿՀ-ի կողմից, (2020թ.-ի 2-րդ եռամսյակ)	Կատարված է մասնակի

			<p>ներառականությունը: Համաժողովի արդյունքում ձևավորեցին աշխատանքային խմբեր՝ կազմված 23 տեղական ինքնակառավարման մարմինների, Արդարադատության նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Հայաստանի համայնքների միության, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ տեղական ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանություն մշակելու նպատակով:</p> <p>Բացի այդ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից արդեն իսկ մշակվել է պետական կառավարման համակարգի մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանությունը, որի հետ համադրված եղանակով կիրականացվի նաև տեղական ինքնակառավարման</p>	<p>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)</p> <p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>		
--	--	--	---	--	--	--

			մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանության մշակումը:			
8.	Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն , այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողություններ ի ծրագրերի մշակում և իրականացում	Մշակվել է պետական կառավարման համակարգի մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանություն: Մեթոդաբանության հիման վրա պետական կառավարման համակարգի բոլոր մարմիններում, այդ թվում՝ պետական մասնակցությամբ կազմակերպություններում իրականացվել են ռիսկերի համապարփակ գնահատումներ:	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից միջազգային փորձագետների աջակցությամբ, մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ ծրագրի փորձագետների աջակցությամբ մշակվել և 2020 թվականի մարտի վերջին կազմվել է պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համապարփակ մեթոդաբանություն: Մեթոդաբանության կիրառման հետագա աշխատանքները կասեցվել են նոր կորոնավիրուսի տարածման հետևանքով: Ստացված առաջարկությունների հիման վրա մեթոդաբանությունը գտնվում է լրամշակման փուլում: Միևնույն ժամանակ, Պաշտպանության նախարարության ներքին աուդիտի վարչությունում իրականացվել է ռիսկերի հավաքագրում, բացահայտված ռիսկերի հիման վրա կազմվել է կոռուպցիոն ռիսկերի	«Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Պետական կառավարման մարմիններում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը հաստատվել է ԿԿՀ-ի կողմից (2020թ.-ի 2-րդ եռամսյակ),	Կատարված է մասնակի

			<p>տեղեկագիր և մշակվել է հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագիր և դրա իրականացման ժամանակացույց, որը ներկայումս վերջնական քննարկումների փուլում է: Բացի այդ, Պաշտպանության նախարարության կոռուպցիայի ռիսկերի գնահատմանը և արդյունավետ կառավարման ապահովմանը աջակցելու նպատակով ՆԱՏՕ-ի ինքնագնահատման ծրագրի շրջանակներում իրականացվում է ինքնագնահատման գործընթաց, որը հետաձգվել է աշխարհում կորոնավիրուսային հիվանդության համաճարակի պատճառով:</p> <p>:</p>			
9.	Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուներ, դատախազների և դատախազների	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է ««Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա	2020 թվականի մարտի 25-ին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծերի փաթեթի շրջանակում ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն		Կատարված է

<p>թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում</p>	<p>անձանց բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ ուսումնասիրությունների իրականացման և, ըստ այդմ, տվյալ անձին նշանակելու իրավասություն ունեցող անձին նշանակման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու գործառույթ: Մշակվել և հաստատվել է բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց արդյունքներով խորհրդատվական բնույթի եզրակացությունների տրամադրման կարգը:</p>	<p>նախագիծը, որով ընդլայնվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները: Ընդլայնված գործառույթների շրջանակը ներառում է նաև դատավորների թեկնածուների հավակնորդների, Սահմանադրական դատարանի դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված այլ անձանց բարեվարքության ստուգման մեխանիզմները: Օրենքով սահմանվել է նաև, թե ինչ է ենթադրում բարեվարքության ուսումնասիրությունը, որը ներառում է բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգում, անձի կողմից նախկինում քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի, այդ թվում՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների</p>	<p>ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն</p>		
---	--	---	---	--	--

			<p>պահպանման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտում կատարած լինելու հանգամանքների ուսումնասիրություն, անձի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրություն, անձի գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտների համապատասխանության, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրություն, անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն, անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն:</p> <p>Հարկ է նշել, որ այս փուլում պիլոտային եղանակով իրականացվում է վերոգրյալ անձանց բարեվարքության ուսումնասիրություն՝ հետագայում այն պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց նկատմամբ իրականացնելու</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>նկատառումով: ՀՀ արդարադատության նախարարության, ինչպես նաև ԱՄՆ ՄՁԳ և Եվրոպայի Խորհրդի փորձագետների օգնությամբ Հանձնաժողովը մշակել ևհաստատել է պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց/թեկնածուների բարեվարքության գնահատման մեթոդաբանություն և բարեվարքության հարցաթերթիկ: Միևնույն ժամանակ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացրել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների և ՀՀ գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց բարեվարքության ստուգում, և ներկայացրել է 26 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ եզրակացություն, որից 2-ը եղել է բացասական, 11-ը՝ դրական վերապահումով, իսկ 13-ը՝ դրական:</p>			
10.	«Հանրային ծառայության մասին» և	«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական	Ընդունվել են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական	ՀՀ Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական	«Հանրային ծառայության մասին» և	Կատարված է մասնակի,

<p>«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում</p>	<p>ծառայության մասին» օրենքներից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով կազմակերպվել են վերապատրաստումներ:</p>	<p>ակտերը: 2020 թվականի հունվարի 30-ին ընդունվել է «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրի ու հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրի օրինակելի ձեվերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության թիվ 102-Ն որոշումը, իսկ մարտի 12-ին՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի</p>	<p>ծառայության գրասենյակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտերի 100%-ն ընդունված է: 2019 Անց է կացվել 5 վերապատրաստում:</p>	
--	--	---	---	--	--

			<p>դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության թիվ 306-Ն որոշումը:</p> <p>2020 թվականի մարտի 25-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Հայտարարագրման համակարգի կատարելագործմանն ուղղված մեկ այլ՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 2020 թվականի հուլիսի 7-ին ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p> <p>Հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը, որի համաձայն՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության որջ</p>			
--	--	--	--	--	--	--

			տարածքում կիրառվել են ժամանակավոր սահմանափակումներ՝ «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված վերապատրաստումները դադարեցվել են: Միևնույն ժամանակ, իրազեկումն իրականացվում է էլեկտրոնային հարթակում:			
11.	«Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովներ չու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում	«Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության մասին օրենքներով ձևավորվել են էթիկայի հանձնաժողովներ և բարեվարքության հարցերով կազմակերպիչներ: Մշակվել են էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության	էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորման նպատակով ուսումնասիրվել է միջազգային փորձը, կատարվել են համեմատական վերլուծություններ և գնահատվել է միջազգային լավագույն փորձի ներդրման հնարավորությունը ներպետական օրենսդրության մեջ: Մշակման փուլում են գտնվում էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ուղեցույցների նախագծերը: ՀՀ արդարադատության	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	Պետական կառավարման համակարգի բոլոր մարմիններում նշանակվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչներ (2020թ.): Մշակվել է էթիկայի հանձնաժողովներ և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության առնվազն 2	Կատարված է մասնակի

		<p>ուղեցույցներ:</p>	<p>նախարարության կողմից պետական կառավարման համակարգի մարմիններից հավաքագրված տեղեկատվության համաձայն՝ պետական կառավարման համակարգի մարմիններն, որոնք արդեն անցել են նոր չափանշներով պաշտոնների գնահատման և դասակարգման համակարգին, ունեն նշանակված բարեվարքության հարցերով կազմակերպիչներ:</p> <p>Հարկ է նշել, որ Արտաքին գործերի նախարարության շրջանակում սահմանվել են արտաքին գործերի նախարարության կարգուկանոնը սահմանող, աշխատանքային պայմանների առանձնահատկություններն արտահայտող և նախարարության աշխատակիցների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորող ներքին կարգապահական կանոններ, սահմանվել են դիվանագետի վարքագծի (էթիկայի) կանոնները, որի խախտումն կառաջացնի կարգապահական պատասխանատվություն:</p> <p>«Դիվանագիտական</p>		<p>ուղեցույց (2020թ.)</p>	
--	--	----------------------	--	--	---------------------------	--

			ծառայության մասին» օրենքի դրույթներին համապատասխան, ընտրվել են դիվանագետի էթիկայի հանձնաժողովի 7 անդամներ և ձևավորվել է հանձնաժողովը:			
12.	Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխում	Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման ուղղված միջոցառումներ են նախատեսվել ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ:	Վարձատրության համակարգի բարելավման հիմնական ուղղություններն ուսումնասիրվել են: Ուսումնասիրությունների արդյունքում մշակված առաջարկությունները ներառվել են Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության նախագծում:	«Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման ուղղությունների ու ծախսերի հաշվարկի վերաբերյալ վերլուծության հիման վրա մշակված միջոցառումները հաստատվել են Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության շրջանակներում 2019 թ.	Կատարված է մասնակի
13.	«Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային	Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները սահմանելու նպատակով ուսումնասիրվել է միջազգային փորձը, կատարվել են	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)		Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

<p>ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանում</p>	<p>ներկայացվել առաջարկությունների փաթեթ:</p>	<p>է</p>	<p>վերլուծություններ և գնահատվել է ներպետական օրենսդրության մեջ միջազգային լավագույն փորձի ներդրման հնարավորությունը: Հանրային ծառայության մասին օրենքով նախատեսված հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Հարկ է նշել, որ 2019 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում Հանձնաժողովը դիմել և ստացել է 30 պետական գերատեսչությունների գործող վարքագծի կանոնների վերաբերյալ տեղեկություններ: Ձուգահեռաբար, իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն՝ գործող վարքագծի կանոնները կատարելագործելու, դրանք միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու և դրանց պրակտիկ կիրառելիության ինստիտուցիոնալ մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ: Հանձնաժողովը նախատեսում էր մշակված նախագծի շուրջ իրականացնել հանրային քննարկումների շարք, այնուհետև հաստատել այն, սակայն նոր</p>	<p>ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ</p> <p>Պետական կառավարման համակարգի մարմիններ</p>		
--	--	----------	--	--	--	--

			<p>կորոնավիրուսի տարածման պատճառով այդ աշխատանքները կասեցվել են: Վարքագծի կանոնների բացահայտված մի քանի խնդիրների առնչությամբ, մասնավորապես՝ պատասխանատվության միջոցների, դրանց համաչափության սահմանման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում Եվրոպայի Խորհրդի փորձագետների աջակցությամբ: Մինևույն ժամանակ << պաշտպանության նախարարության կողմից կատարվել են անհրաժեշտ միջոցառումներ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների՝ կոնկրետ սպայի պատվի կանոնների բարեփոխման ուղղությամբ: Հարկ է նշել, որ Արտաքին գործերի նախարարության շրջանակում սահմանվել են արտաքին գործերի նախարարության կարգուկանոնը սահմանող, աշխատանքային պայմանների առանձնահատկություններն արտահայտող և</p>			
--	--	--	--	--	--	--

			<p>նախարարության աշխատակիցների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորող ներքին կարգապահական կանոններ, սահմանվել են դիվանագետի վարքագծի (էթիկայի) կանոնները, որի խախտումն կառաջացնի կարգապահական պատասխանատվություն:</p>			
14.	Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանում	Մշակվել են պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնները:	<p>Իրականացվել է Շրի Լանկայի, Ռուսաստանի Դաշնության, Անգլիայի, Լատվիայի, Լիտվայի, Բելառուսի, Ֆրանսիայի, Վրաստանի և այլ երկրների պատգամավորների վարքագծային կանոնները սահմանող օրենսդրության ուսումնասիրություն:</p> <p>Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ներկայումս բանակցություններ են տարվում միջազգային գործընկերների հետ պատգամավորի վարքագծի կանոնների սահմանման ուղղությամբ:</p> <p>Միաժամանակ, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը աշխատանքներ է իրականացվում ՀՀ հատուկ քննչական ծառայության</p>	<p>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ)</p> <p>Քննչական մարմիններ (համաձայնությամբ)</p>		Կատարված է մասնակի

			<p>ծառայողների կանոնագրքի ուղղությամբ:</p> <p>վարքագծի վերանայման</p>			
15.	<p>Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում</p>	<p>Վերանայվել են քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգերը՝ գրոյականացնելով քաղաքացիական ծառայողների ներգրավման գործընթացում քաղաքական ազդեցությունը</p>	<p>Մինչև 01.06.2020 թվականն իրականացվել են գլխավոր քարտուղարների 11 թափուր պաշտոնների համալրման համար անցկացվող մրցութային նախապատրաստական աշխատանքներ և անցկացվել են 10 մրցութային:</p> <p>Ուսումնասիրվել են համապատասխան մարմինների կողմից ղեկավար և մասնագիտական խմբի թափուր պաշտոններն զբաղեցնելու համար անցկացված մրցութային փաթեթները, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքին համապատասխան՝ հանձնաժողովների կազմերում պաշտոնատար անձանց ընդգրկվելու իրավական հիմքերը, տրվել են մեթոդական ցուցումներ:</p>	<p>ՀՀ Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ</p> <p>Հասարակական կազմակերպություններ (Համաձայնությամբ)</p>		<p>Կատարված է</p>
16.	<p>Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում</p>	<p>Միջազգային փորձի ուսումնասիրությունն իրականացվել է: Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության հստակ չափանիշների և շրջանակի վերաբերյալ առաջարկությունը</p>	<p>Իրականացվել է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության միջազգային փորձի ուսումնասիրություն:</p> <p>Ուսումնասիրվել է Լատվիայում, Լիտվայում, Հարավային Կորեայում, և այլ երկրներում առկա միջազգային փորձը:</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) (համաձայնությամբ)</p> <p>Հասարակական կազմակերպություններ</p>		<p>Կատարված է մասնակի</p>

		ներկայացվել է ՀՀ Վարչապետի աշխատակազմ:	Միջազգային փորձի ուսումնասիրության ժամանակ առավելապես ուշադրություն է դարձվել, թե հատկապես որ մարմիններն են իրականացնում հակակոռուպցիոն գնահատումը, որ իրավական ակտերն են ենթարկվում գնահատման: Ուսումնասիրվել է նաև այն հարցերի շրջանակը, որոնք ստուգվում են հակակոռուպցիոն գնահատումը իրականացնող մարմինների կողմից: Արդյունքում մշակվել է առաջարկությունների փաթեթ:	եր (համաձայնությամբ)		
17.	Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում: Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում	«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ընդունվել է: Ընդլայնվել է հայտարարատուների շրջանակը՝ հայտարարատուների ցանկում, ի թիվս մի շարք այլ պաշտոնյաների, ներառելով նաև 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամներին և աշխատակազմերի	2020 թվականի մարտի 25-ին Ազգային ժողովի կողմից ի թիվս դատական օրենսգրքում և մի շարք այլ օրենքներում կատարված փոփոխությունների՝ ընդունվել են նաև հայտարարագրման համակարգին և, մասնավորապես, իրավիճակային հայտարարագրի ներդրմանը, ինչպես նաև բարեվարքության ուսումնասիրությանն ուղղված կառուցակարգեր, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ձեռք է բերել ֆինանսական տեղեկությունների հասանելիություն: Զուգահեռաբար մշակվել, շրջանառության մեջ է դրվել,	ՀՀ արդարադատության նախարարություն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ) (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Լրամշակված օրենքի նախագիծը ներկայացվել է ԱԺ (2020թ.)	Կատարված է մասնակի

		<p>քարտուղարներին, հանրային նշանակության կազմակերպություններում վարչական պաշտոն զբաղեցնող անձանց: Ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմ հասկացությունը: Վերանայվել է հայտարարագրման բովանդակությունը, ընդլայնվել են հրապարակման ենթակա տվյալները, իջեցվել է հայտարարագրման ենթակա թանկարժեք գույքի արժեքային շեմը, ներդրվել է փաստացի օգտագործվող գույքը հայտարարագրելու պահանջ, հստակեցվել են փոխառությունների և եկամուտների տեսակները, ներդրվել է ծախսերի հայտարարագրման համակարգ: Պետական պաշտոնի հավակնող և նման պաշտոն զբաղեցնող անձանց</p>	<p>ինչպես նաև ներկայացվել հանրային քննարկման «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի փաթեթը, որը ստացված առաջարկությունների հիման լրամշակվել է և ներկայացվել է վարչապետի աշխատակազմ: Հարկ է նշել, որ օրենքի նախագծերի փաթեթը քննարկվել է նաև Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում: Սույն նախագծով է ներդրվելու է նոր՝ ծախսերի հայտարարագրման ինստիտուտ, որոշակի կոնկրետ ծախսերի դեպքում, անձը պարտականություն է կրում այն հայտարարագրելու, եթե այդպիսի ծախսի միանվագ արժեքը գերազանցում է մեկ միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը կամ հաշվետու ժամանակահատվածում նույն տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է երկու միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Միաժամանակ նախագծով նաև սահմանվել է դրույթ, առ այն, որ հայտարարագրման է ենթակա</p>			
--	--	--	--	--	--	--

		<p>համար սահմանվել է լիազոր մարմնին նոտարական կարգով աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փնտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին տեղեկատվություն ստանալու լիազորագիր տալու պարտականություն:</p>	<p>նաև ցանկացած այլ ծախս, եթե դրա միանվագ արժեքը գերազանցում է երկու միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արժույթը: Նախագծով առաջարկվում է հայտարարագրման ենթակա գույք սահմանել նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը: Նախագծով սահմանվել է նաև փաստացի տիրապետվող գույքի հասկացությունը: Նախագծով առաջարկվում է ներդնել մեխանիզմ, որի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո 2 տարվա ընթացքում անձի գույքի էական փոփոխության կասկածի դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրավասու կլինի վերջինից պահանջել ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: Առաջարկվում է նվազեցնել Օրենքով սահմանված թանկարժեք գույքի դրամական շեմը՝ 8 միլիոնի փոխարեն սահմանելով 4 միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք արժույթ; Նախատեսվում է ընդլայնել հայտարարատուների</p>			
--	--	---	--	--	--	--

			<p>շրջանակը՝ հայտարարագրման պարտականություն սահմանելով նաև համայնքների աշխատակազմի քարտուղարների, համայնքների ավագանու անդամների համար: Սահմանվել է նաև, թե ինչ է ներառում քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրությունը: Բարեվարքության ուսումնասիրության գործընթացում, բացի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին օրենքի համաձայն առկա տվյալներ ստանալուց, առաջարկվում է նաև օժտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին դիմելու և անհրաժեշտ տեղեկություններ ստանալու իրավասությամբ՝ հայտարարագրերի վերլուծության ընթացքում գույքի փաստացի տիրապետումը ստուգելու և քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրության նպատակով: Հարկ է նշել նաև, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով (2018 թվականի 206-Ն)</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>նախատեսված պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից գույքի եկամուտների և շահերի հայտարարագրման գործընթացը կազմակերպելու նպատակով Հանձնաժողովը ՀՀ Արդարադատության նախարարության հետ համատեղ մշակել է հայտարարագրերի նոր ձևաչափը, որը հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից 2020 թվականի հունվարի 30-ին: Հայտարարագրերի նոր ձևանմուշը հնարավորություն է տալիս հավելյալ տեղեկություններ ստանալ, մասնավորապես՝ դրամական միջոցների մնացորդի, գույքի ծագման աղբյուրների վերաբերյալ: Միաժամանակ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հայտարարագրերի վերլուծության գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով 2020 թվականի հունիսի 12-ին ընդունվել է Կենտրոնական բանկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը և ձևաչափը հաստատելու մասին» համատեղ որոշումը: Հաշվի առնելով վերոգրյալը և Հանձնաժողովի ֆինանսական տեղեկություններին հասանելություն ունենալու հանգամանքը՝ Նախագծից դուրս է մնացել Հանձնաժողովին լիազորագիր տալու հայտարարատու պաշտոնատար անձանց պարտականություն սահմանելու պահանջը:</p>			
18.	<p>Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում</p>	<p>Կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ:</p>	<p>Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցման նպատակով իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Մասնավորապես ուսումնասիրվել է պաշտոնատար անձանց ձեռնարկատիրական ընկերություններում ունեցած բաժնեմասերը հավատարմագրային կառավարման հանձնելու հետ կապված իրավակարգավորումները: Ուսումնասիրվել է ԱՄՆ-ի, Կանադայի, Ուկրաինայի, Մեծ Բրիտանիայի, Սերբիայի և այլ</p>	<p>«Արդարադատության նախարարություն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով)</p>	<p>Միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ համապատասխան առաջարկություններով ներկայացվել ու քննարկվել է Հակակոռուպցիոն խորհրդում (2020թ)</p>	<p>Կատարված է մասնակի</p>

			<p>երկրների իրավական համակարգերը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ ՏՀԶԿ-ի կողմից մշակված կանոնները: Կատարված հետազոտության հիման վրա վեր են հանվել այն առանցքային պայմանները, որը բնորոշ է երկրների մեծ մասում կիրառվող հավատարմագրային կառավարման մեխանիզմին: Վերոնշյալ միջազգային փորձի հիման վրա մշակվել է ՀՀ օրենսդրությունում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների փաթեթ՝ հաշվի առնելով գործող ՀՀ իրավական կարգավորումները:</p>			
19.	<p>Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործու</p>	<p>Մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված իրավական</p>	<p>ՀՀ Ազգային ժողովի կողմից 2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ) (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություն</p>	<p>Միջազգային փորձի ուսումնասիրությունը համապատասխան առաջարկություններով ներկայացվել ու քննարկվել է Հակակոռուպցիոն խորհրդում (2019թ.) Լրամշակված իրավական ակտերի</p>	<p>Կատարված է մասնակի</p>

	մ, նվերների ռեեստրի ստեղծում	ակտերի նախագիծ: Մշակվել է նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանք:	սահմանադրական օրենքների և հարակից օրենքների փաթեթի շրջանակներում կատարվել են փոփոխություններ նվերների ինստիտուտի կարգավորման ուղղությամբ: Մասնավորապես՝ կատարվել են փոփոխություններ նվերներ ընդունելու արգելքին առնչվող կարգավորումներում: Նվերների ռեեստրի ստեղծման ուղղությամբ տարվում են աշխատանքներ: Կատարվել է ոլորտի միջազգային փորձի ուսումնասիրություն: Միաժամանակ, մշակվել և առաջիկա օրերին հանրային քննարկման կներկայացվի «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված նվերները հաշվառելու և հանձնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	եր (համաձայնությամբ)	նախագծերի փաթեթը հաստատվել է (2020թ.)	
20.	Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման վերաբերյալ	Ուսումնասիրվել է լոբբիստական գործունեության կարգավորման, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման վերաբերյալ	Ուսումնասիրվել է Իռլանդիայի, Լեհաստանի, Լիտվայի, Ավստրիայի լոբբիստական գործունեության փորձը: Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել է «Լոբբիստական գործունեության մասին», «Վարչական	ՀՀ արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	Կատարված է մասնակի	

<p>միջոցների ֆինանսավորման թափանցիկությա ն ապահովում</p>	<p>միջազգային փորձը: Վեր են հանվել Հայաստանում տվյալ ոլորտում առկա խնդիրները և ներդրման հեռանկարները: Մշակվել և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին է ներկայացվել համապատասխան առաջարկությունների փաթեթ</p>	<p>իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որի նպատակն է ձևավորել լրբինգ ինստիտուտը, որը կնպաստի իշխանության և քաղաքացիների կապի ամրացմանը և հնարավորություն կընձեռնի ներկայացնել քաղաքացիների, կազմակերպությունների շահերը հատուկ մարմնի միջոցով: Նախագիծը կարգավորում է լրբիստների եւ լրբիստական կազմակերպությունների իրավական կարգավիճակը՝ դրանց ստեղծման, գրանցման կարգը, իրավունքների ոլորտը, հաշվետվության կարգը եւ բնույթը: Օրենքի նախագծով սահմանված է նաեւ լրբիստական կազմակերպությունների գործունեության վերահսկման մեխանիզմը: Լրբիստական գործունեությամբ զբաղվելու իրավունքի թույլտվության եւ պետական գրանցում կատարելու համար նախատեսվում է գանձել պետական տուրք, որի չափերը սահմանված են օրենսդրական</p>	<p>ՀՀ Ազգային ժողով (համաձայնությամբ) Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպությունն եր (համաձայնությամբ)</p>			
--	---	---	--	--	--	--

			<p>փաթեթում ներառված «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով: Ներկայացված օրինագծի համաձայն լրբբիստական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտները պետք է հաշվառվեն լիազրված մարմնում եւ ստանան հաշվառման վկայական: Օրինագծով սահմանվում է նաև, որ լրբբիստական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտները պարտավոր են իրենց գործունեության մասին հաշվետվություններ ներկայացնել լիազորված մարմնին, ինչը թույլ կտա ապահովել նրանց գործունեության թափանցիկությունը: Միաժամանակ, լրբբիստական գործունեության իրականացման անհրաժեշտ պայման է դիտվում համապատասխան կանոնակարգերի համաձայն լրբբիստների հավատարմագրումը:</p> <p>Հարկ ենք համարում նշել, որ մշակման փուլում է գտնվում «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի փաթեթը՝ ուղղված կուսակցությունների գործունեության ֆինանսավորման թափանցիկությանը: Բացի այդ, օրենքի նախագծերի փաթեթը ներկայացվել է Վենետիկի Հանձնաժողով:</p> <p>Հարկ է նշել, որ 2020 թվականի հուլիսի 3-ին կայացած Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում քննարկվել են քաղաքական և լրատվական գործունեության ֆինանսավորման թափանցիկության հարցեր, որի արդյունքում ներկայումս իրականացվում են աշխատանքներ առաջարկությունների փաթեթի մշակման ուղղությամբ: Փաստորեն, վերոգրյալից կարող ենք ենթադրել, որ 2020 թվականին նախատեսվող առաջարկությունների փաթեթի մշակումից բացի արդեն մշակվել են սույն ոլորտները կարգավորող օրենքի նախագծերի փաթեթները:</p>			
--	--	--	--	--	--	--

21.	<p>Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թվում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում</p>	<p>Ուսումնասիրվել են հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրները Ուսումնասիրվել է հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ միջազգային փորձը և առկա իրավիճակը Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հանրային նշանակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:</p>	<p>Ուսումնասիրվել է հանրային նշանակության կազմակերպությունների վերաբերյալ իրավակարգավորումները, որից պարզ է դարձել, որ հանրային նշանակության կազմակերպություններն են՝ ա. հանրային ծառայությունների ոլորտում ծառայություն մատուցող կազմակերպություն, բ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված և (կամ) լիցենզիա ստացած կազմակերպություն, գ. կազմակերպություն, որն իր գործունեության բնույթի, մեծության կամ աշխատակիցների քանակի ուժով ունի էական հանրային կարևորություն:</p> <p>Ուսումնասիրվել է գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության միջազգային փորձը : Բացի այդ, Կորպորատիվ կառավարման կենտրոնի կողմից կազմակերպված «Հակակոռուպցիոն համապատասխանությունը որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>		Կատարված է
-----	--	---	--	--	--	------------

			<p>բաղադրիչ» ձեռնարկի շնորհանդեսի ընթացքում ներկայացվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ իրականացված միջազգային փորձի արդյունքները: Որպես բանախոսներ հրավիրված էին Հայաստանում «Բի-լայն» և «USU Հայաստան» ընկերությունների ներկայացուցիչները, ովքեր ներկայացրեցին հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի (ՀՀԾ) ներդրման իրենց փորձը, առկա խնդիրները հաղթահարելու ուղղությամբ իրականացված աշխատանքները, ՀՀԾ-ի վերաբերյալ աշխատակիցների և գործընկերների կողմից դրական ընկալման ձևավորումը և բիզնեսի զարգացման համար համապատասխանության առավելությունները:</p>			
22.	Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների	Ներկայացվել են գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ներդրման վերաբերյալ	Միացյալ Թագավորության Լավ կառավարման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Կորպորատիվ կառավարման և ֆինանսական հաշվետվողականության	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	Ուսումնասիրությունը քննարկվել է հակակոռուպցիոն խորհրդում (2020թ.-ի 1-ին եռամսյակ)	Կատարված է մասնակի

	<p>ընդունման խթանում</p>	<p>առաջարկություններ:</p>	<p>բարելավված կանոնակարգ» ծրագրի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության անմիջական մասնակցությամբ «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» (PwC) ընկերության ու Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել Կորպորատիվ կառավարման կանոնագրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) : «Հակակոռուպցիոն համապատասխանությունը որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բաղադրիչ» ձեռնարկի շնորհանդեսի ընթացքում ներկայացվել են նաև ՀՀԾ-ների ներդրման վերաբերյալ առաջարկությունները: Նախագծով, ի թիվս այլ սկզբունքների՝ ամրագրված են մասնավոր հատվածում էթիկական և հակակոռուպցիոն համապատասխանությունը խթանող սկզբունքները, որոնց իրագործման պարտականությունը դրվել է տնօրենների խորհրդի (խորհրդի) վրա: Բացի այդ, Կանոնագրքի նախագծում նախատեսված է, որ կազմակերպություններում պետք</p>	<p>Հասարակական կազմակերպությունն եր (համաձայնությամբ)</p>	<p>Իրականացվել է առնվազն 2 հանրային քննարկում (2020թ-ի 2-րդ եռամսյակ)</p>	
--	------------------------------	---------------------------	---	---	---	--

			<p>է ձևավորվի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ, որի կարևոր բաղադրիչներից է համապատասխանության գործառույթը: Կանոնագրքի նախագծով այս գործառույթն իրականացնող անձի վրա դրված է նաև հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ներդրմանը նպաստելու և դրա նկատմամբ մշտադիտարկումն իրականացնելու պարտականությունները: Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ կորոնավիրուսային հիվանդության համաճարակի և այդ կապակցությամբ հայտարարված արտակարգ դրության պայմաններում հանրային քննարկումների իրականացումը հնարավոր չի եղել ապահովել: Հայաստանյան գործարար համայնքում հակակոռուպցիոն համապատասխանության ընկալումը բարելավելու և դրա ներդրմանը նպաստելու նպատակով «Մասնավոր ձեռնարկատիրության միջազգային կենտրոն»-ի ֆինանսավորմամբ Կորպորատիվ կառավարման կենտրոնի կողմից</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>2020 թվականի հունիսի 1-ից իրականացվում է նոր ծրագիր, որին մասնակցելու է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Ծրագիրը կոչվում է «Հայաստան. մասնավոր հատվածի հնարավորությունների բարելավում՝ Ժողովրդավարական անցմանն աջակցելու համար»: Դրա շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> • գործարար համայնքի և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչների համար սեմինարներ, • Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի հետ համատեղ ուսումնասիրության իրականացում՝ քիզնեսի հակակոռուպցիոն համապատասխանության թեմայով, • հակակոռուպցիոն հավաքական գործողությունների զարգացում՝ հակակոռուպցիոն կոալիցիայի ձևավորման միջոցով, • հանրային իրազեկվածության բարձրացման նպատակ ունեցող 			
--	--	--	--	--	--	--

			<p>միջոցառումներ, այդ թվում՝ կլոր սեղանների հրավիրում, տպագիր նյութերի մշակում,</p> <ul style="list-style-type: none"> • 2021թ.-ի փետրվարին կորպորատիվ կառավարման միջազգային կոնֆերանսի հրավիրում: <p>Վերոգրյալ միջոցառումների իրականացման համատեքստում նախարարության և Կորպորատիվ կառավարման կենտրոնի համագործակցությամբ ակնկալվում է գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ներդրման խթանում:</p>			
23.	Գնումների ոլորտի բարելավում	Պետական գնումների համակարգի շարունակական կատարելագործման նպատակով իրականացվել է ոլորտային խնդիրների ուսումնասիրություն: Ուսումնասիրության հիման վրա մշակվել և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում քննարկվել է պետական գնումների համակարգի շարունակական	<p>ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից մշակվել և 21.02.2020թ. թիվ 01/26-1/2507-2020 գրությամբ պետական կառավարման մարմինների, միջազգային դոնոր գործընկերների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների քննարկմանն է ներկայացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների</p>	ՀՀ Ֆինանսների նախարարություն	Իրականացվել է ուսումնասիրություն և գնման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման ուղղությամբ (2020թ.-ի 2-րդ եռամսյակ)	Կատարված է մասնակի

		<p>կատարելագործմանն ուղղված առաջարկությունների փաթեթը:</p>	<p>մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է գնումների բողոքարկման համակարգի ինստիտուցիոնալ առումով վերափոխման, Օրենքների նախագծերում փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝</p> <ul style="list-style-type: none"> • գործող կարգավորման համաձայն գնման ընթացակարգի արդյունքները կարող են բողոքարկվել ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով: Բողոքներկայացնել հնարավորություն ունի ցանկացած անձ: <p>Կատարված ախտորոշումները ցույց են տալիս, որ արտադատական բողոքարկման համակարգն արդյունավետ չէ այն տեսակետից, որ կայացվող</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>որոշումները գնումների մասին «« օրենսդրության տեսանկյունից խնդրահարույց են, կայացվում են միմյանց հակասող որոշումներ, որոնց հետևանքով կամ այդ որոշումները բողոքարկվում են դատարաններում կամ գնման ընթացակարգերը հայտարարվում են չկայացած, ինչը դրանք կազմակերպելու և անցկացնելու տեսակետից հանգեցնում են ծրագրերի ձախողման, դժգոհությունների և ֆինանսական կորուստների: Ըստ վիճակագրության տարեցտարի մեծանում է արտադատական կարգով քննված բողոքների վերաբերյալ կայացված որոշումները մասնակիցների կողմից դատական կարգով բողոքարկման դեպքերը և դա այն պարագայում, երբ գործող կարգավորումները չեն նախատեսում դատարանների կողմից դրանց հատուկ վարույթով քննելու ընթացակարգեր: Միաժամանակ խնդրահարույց է նաև բողոք ներկայացնելու հնարավորություն ունեցող անձանց լայն շրջանակը: Ցանկացած անձ, որը բովանդակային առումով չունի տվյալ գնման ընթացակարգին</p>		
--	--	--	---	--	--

			<p>շրջանակում շահագրգռվածություն, ունի գնման ընթացակարգը բողոքարկելու և դրանով պայմանավորված գործընթացները ձգձգելու հնարավորություն, այդ թվում նաև դիտավորյալ:</p> <p>Միաժամանակ գործող արտադատական բողոքարկման համակարգը ինչպես ինստիտուցիոնալ (անկախության), այնպես էլ կիրառելիության տեսակետից ուսումնասիրվել է նաև ԵՄ ՍԻԳՄԱ ծրագրի փորձագտների կողմից և գնահատվել խնդրահարույց.</p> <ul style="list-style-type: none"> • օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած միջոցների հաշվին գնումների կատարման ժամանակ կիրառվում են ազգային ռեժիմից տարբերվող ընթացակարգեր: <p>Մասնավորապես խնդրահարույց է գնումների ընթացակարգերի կազմակերպման համար միասնական կանոններ չունենալու հանգամանքը, որը հանգեցնում է նաև դրանց կազմակերպման և կառավարման համար տարբեր</p>			
--	--	--	--	--	--	--

			<p>մասնագիտական կարողություններ և աշխատանքային ունակություններ ունեցող մասնագետների անհրաժեշտության: Միասնական կանոնների բացակայությունը որոշակի բարդություններ է առաջացնում նաև գնման գործընթացների հնարավոր մասնակիցների համար: Արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի հաշվին գնումները ազգային ռեժիմով իրականացնելու պարագայում կստեղծվեն ռեսուրսների համախմբման և գործընթացները միասնական կանոններով կառավարելու հնարավորություն, ինչը դրական ազդեցություն կունենա նաև պետական համակարգում նախաձեռնված բարեփոխումների գործընթացի վրա: Միաժամանակ Հայաստանի՝ ԱՀԿ պետական գնումների համաձայնագրին անդամակցությունը հնարավորություն է ընձեռում նշված գնումները ազգային ռեժիմով իրականացնելու նախադրյալներ ստեղծելու համար: Այս կապակցությամբ ՖՆ-ի</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>նախաձեռնությամբ Համաշխարհային Բանկի կողմից իրականացվել է գնումների ազգային օրենսդրության և ընթացակարգերի ուսումնասիրություն, որի արդյունքում ներկայացվել է նոր սկսվող ներդրումային ծրագրերի իրականացման համար գնումների այլընտրանքային պայմանավորվածությունների իրականացման այն պայմանները, որոնք գնումների հետ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում նախատեսվելու դեպքում հնարավոր կլինի կիրառել ազգային ընթացակարգերը:</p> <p>Նախագծերով նախատեսվում են կատարվել հիշյալ խնդիրը կարգավորելու հետ կապված փոփոխություններ՝</p> <ul style="list-style-type: none"> • սահմանելով այն կարգավորումները, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել գնումների այլընտրանքային պայմանների կիրառումը. • փոխել բողոքարկման համակարգի գործող մոդելը՝ բողոքարկման ընթացակարգն իրականացնելով միայն դատական կարգով՝ հատուկ 			
--	--	--	--	--	--	--

			վարույթի միջոցով: Հարկ է նշել, որ 2020 թվականին նախատեսվող սույն ոլորտը կարգավորող առաջարկությունների փաթեթից բացի մշակվել է օրենքի նախագծերի փաթեթ:			
24.	Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում	Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ: Մշակվել է պետական ռեգիստրի շրջանակներում իրական սեփականատերերի գրանցամատյանի ծրագրային ապահովումը	Միջազգային փորձի համապարփակ վերլուծության հիման վրա մշակվել է իրական սեփականատերերի թափանցիկության ապահովման անհրաժեշտ կառուցակարգերի և բաց ռեգիստրի ներդրմանն ուղղված օրենսդրական փաթեթ, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին» օրենսգրքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը 2019թ ապրիլի 23-ին, ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից: Վերջինիս համաձայն՝	ՀՀ արդարադատության նախարարություն Պետական կառավարման համակարգի մարմիններ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Մշակվել ու գործարկվել է իրական սեփականատերերի գրանցամատյանի էլեկտրոնային ծրագրային ապահովումը (2020թ.-ի 1-ին եռամսյակ):	Կատարված է մասնակի

			<p>սահմանվել է «իրական սեփականատեր» հասկացությունը, վերջինիս գրանցման կարգը, պահանջվող փաստաթղթերի շրջանակը, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը, լիազոր մարմնի՝ ընդերքօգտագործման իրավունքի կասեցման կամ դադարեցման հնարավորությունը՝ իրավաբանական անձի կողմից իրական սեփականատերերի մասին տեղեկություններ բովանդակող քաղվածք չներկայացնելու, ներկայացված տվյալների կեղծ կամ ոչ ամբողջական լինելու դեպքում: Փաստորեն պիլոտային եղանակով ներկայումս նման պարտականություն սահմանված է հանքարդյունաբերության ոլորտի համար՝ հետագայում օրենսդրական փոփոխությունների իրականացման և թիրախային ոլորտների աստիճանական սահմանման նպատակով: Մինևույն ժամանակ, ՀՀ արդարադատության նախարարի՝ 2020թ. փետրվարի 5-ի N 36-Ն հրամանով հաստատվել է իրական</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը և հայտարարագրի լրացման և ներկայացման կարգը:</p> <p>«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել է օրենքով իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում իրական սեփականատիրոջ վերաբերյալ ներկայացվելիք տեղեկությունների շրջանակը: Վերոգրյալից կարող ենք եզրակացնել, որ առկա օրենսդրական կարգավորումներն ընդհանրական են և վերաբերում են ցանկացած ոլորտի, որի իրավահարաբերությունները կարգավորող օրենքով այդ ոլորտում գործող իրավաբանական անձանց վրա</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>դրված է իրական սեփականատերերին բացահայտելու պարտականություն:</p> <p>Գործող օրենսդրական կարգավորման պայմաններում, ինչպես արդեն նշել ենք, նման պարտականություն դեռևս կրում են միայն հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք:</p> <p>Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ իրական սեփականատերերի բաց, հանրային գրանցամատյանի մշակման նպատակով շահագրգիռ մարմինների հետ բազմաթիվ քննարկումների կազմակերպման արդյունքում ծրագրային ապահովման աշխատանքները գտնվում են վերջնականացման փուլում:</p>			
25.	Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում	Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի օրենսդրությունն ուսումնասիրվել է: Մշակվել է առկա խնդիրների կարգավորմանն ուղղված առաջարկությունների	Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի օրենսդրությունը ուսումնասիրվել է: Ուսումնասիրությունների հիման վրա մշակվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի	ՀՀ արդարադատության նախարարություն Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ)	Իրականացվել է ուսումնասիրությունն տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի օրենսդրության կատարելագործման ուղղությամբ (2020թ.-ի 4-րդ	Կատարված է

		<p>փաթեթ, այդ թվում՝ Հանձնաժողովի կողմից ստուգումների իրականացման մեխանիզմների կատարելագործման, հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման գործընթացում Հանձնաժողովին օպերատիվ տվյալների հասանելիության տրամադրման հնարավորության դիտարկում:</p>	<p>Հանրապետության օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Նախագծով կարգավորվել են հետևյալ հարցերը՝ տարբերակվել են Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթները՝ սահմանելով դրանց բնորոշ առանձնահատկությունները, տարբերակվել են իրավախախտման վարույթի մասնակիցները, նրանց իրավունքների ու պարտականությունների ծավալը, վարույթի հարուցման առիթները, նախատեսվել է իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու առիթները նախնական ստուգման ենթարկելու ընթացակարգ և վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պայմաններում հարուցումը մերժելու հնարավորություն, կարգավորվել են վարչական վարույթների միացումն ու առանձնացումը, նախատեսվել է Հանձնաժողովի թղթակցությունը վարույթի մասնակիցներին էլեկտրոնային եղանակով հանձնելու ընթացակարգ, նախատեսվել է Հանձնաժողովի</p>		<p>եռամսյակ)</p>	
--	--	---	--	--	------------------	--

			<p>նիստերին տեսաձայնային կապի միջոցով մասնակցելու հնարավորություն, սահմանվել է Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոցների ընտրության հստակ չափանիշներ սահմանելու հնարավորություն:</p> <p>Սահմանվել են Հանձնաժողովի կողմից ընդունվելիք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նորմատիվ հիմքերը, ստուգումներ իրականացնող անձանց լիազորություններում նախատեսվել է տնտեսվարող սուբյեկտի տրամադրության տակ գտնվող ցանկացած շենք կամ փաստաթղթեր կապարակնքելու, տնտեսվարող սուբյեկտի մոտ առկա տեխնիկական միջոցներից օգտվելու հնարավորություն, ֆիզիկական անձանց կողմից կատարվող մի շարք իրավախախտումների համար նախատեսվել է վարչական պատասխանատվություն, նախատեսվել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցության մեխանիզմ և այլն:</p>			
26.	Քաղաքացիների դիմումների,	Ուսումնասիրվել տեխնիկական	է	Ուսումնասիրվել են ստեղծվելիք հարթակի տեխնիկական	«Վարչապետի աշխատակազմ	Կատարված է մասնակի

	բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրում	հնարավորությունը: Մշակվել և ՀՀ Վարչապետին է ներկայացվել առաջարկությունների փաթեթ:	հնարավորությունները պետական կառավարման համակարգի մարմիններում ներդնելու և/կամ գործող էլեկտրոնային համակարգերին փոխկապակցելու նպատակով: Բացի այդ, միասնական հարթակի ստեղծմանն ուղղված հայեցակարգային դրույթները ներկայումս քննարկման փուլում են:	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		
27.	Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում	www.e-draft.am հարթակը ինտեգրված է մի շարք այլ էլեկտրոնային հարթակների հետ: Ձուգահեռաբար իրականացվում են www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ:	ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է www.e-draft.am կայքի արդիականացման տեխնիկական նկարագիրը: Տեխնիկական նկարագրով նախատեսվում է ընդլայնել կայքում առկա գործիքակազմը, այդ թվում՝ ինտեգրել այլ էլեկտրոնային հարթակների հետ: Տեխնիկական նկարագիրը ներկայացվել է կարծիքի շահագրգիռ մարմիններին և լրամշակված տարբերակը ներկայացվել Թվայնացման խորհրդի նիստին քվեարկության նպատակով: Թվայնացման խորհրդի նիստում կայքի արդիականացումը ստացել է դրական եզրակացություն և ներկայացվել	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		Կատարված է մասնակի

			է միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսավորման նպատակով:			
28.	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում՝ այդ թվում դիմումների լրացման օրինակելի ձևերի մշակում	Մշակվել են ծառայությունների մատուցման որակի բարելավմանն ուղղված առաջարկներ	Հանրային կառավարման բարեփոխումների շրջանակներում գույքագրվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունները, հավաքագրվել է առավել շատ կիրառվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն պետական կառավարման համակարգի մարմիններից, որի հիման վրա մշակվել է պետական և համայնքային ծառայությունների մատուցման բիզնես գործընթացների վերանայման և օպտիմալացման մեթոդաբանությունը: Մշակվել է պետական ծառայությունների մատուցման միասնական հարթակի տեխնիկական նկարագիրը, մեկնարկել են հարթակի ստեղծման աշխատանքները: Հարթակում նախատեսվում է համապատասխան բաժին՝	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)	Պետական մարմիններում քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների շրջանակի վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվել է: Պետական մարմիններում քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների շրջանակի վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվել է: Արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն խորհրդում (2020թ.-ի 1-ին	Կատարված է

			մոտուցվող վերաբերյալ մատչելի տրամադրելու գործիքակազմով:	ծառայությունների դիմորդներին տեղեկատվություն	եռմասյակ)	
29.	Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և e-gov.am-ի շրջանակներում էլեկտրոնային հարթակի ներդրում	Արդիականացվել է sso.am էլեկտրոնային համակարգը և ներդրվել e-gov.am հարթակի շրջանակներում:	Մշակվել է պետական ծառայությունների միասնական տեխնիկական հայտարարվել է մրցույթ, ընտրվել է կապալառու կազմակերպությունը: Մեկնարկել են հարթակի ստեղծման աշխատանքները: Ներկայումս, իրականացվում են ծառայությունների մատուցման միասնական e-gov.am հարթակի դիզայնի հայեցակարգային լուծումների մշակման աշխատանքները: Մինչույն ժամանակ, sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացման հարցերը քննարկման փուլում են:	«Վարչապետի աշխատակազմ « արդարադատության նախարարություն « Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)		Կատարված է մասնակի
30.	«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների	Կատարվել են ուսումնասիրություններ, մշակվել է Պետական կառավարման մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի գնահատման զեկույց, որի	«Վարչապետի աշխատակազմ էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման		Կատարված է մասնակի

	<p>տեղեկատվության և պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում</p>	<p>փաթեթ:</p>	<p>նպատակն է գնահատել, թե Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները ինչպես են ապահովում պրոակտիվ հրապարակայնությունը պաշտոնական ինտերնետային կայքերի միջոցով, ինչպես են իրականացնում բաց տվյալների կառավարումը, վեր հանել պրոակտիվ հրապարակայնության իրականացման խնդիրները և մշակել պաշտոնական կայքերի բարեփոխմանն ուղղված գործնական առաջարկների փաթեթ:</p> <p>Ներկայումս Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծման կոնցեպտը քննարկման փուլում է:</p> <p>Բացի այդ, ՀՀ պաշտպանության նախարարությունը որդեգրել է քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների և առավել շատ տրվող հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը պրոակտիվորեն հրապարակելու քաղաքականություն: Այս նպատակով մեկնարկել է ՀՀ ՊՆ</p>	<p>գրասենյակ (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>		
--	---	---------------	--	---	--	--

			կայքէջի «Հաճախ տրվող հարցեր» բաժնի վերանայման աշխատանքները, որոնք ընթացքի մեջ են:			
31.	Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում	Ազդարարման համակարգի գործունեության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված առաջարկությունների ներկայացում:	ՀՀ գլխավոր դատախազությունում պարբերաբար իրականացվում են ներքին և արտաքին ազդարարման համակարգի գործունեության վերաբերյալ ուսումնասիրություններ: Մինչև 2020 թվականի ավարտը կամփոփվեն ուսումնասիրությունների արդյունքները և կներկայացվեն ազդարարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)		Կատարված է մասնակի
33.	ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, անհրաժեշտությա	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ:	2020 թվականի մայիսի 21-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա, տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում «Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) համագործակցության արդյունքում Նախագծով վերանայվել են կոռուպցիոն	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե	Միջազգային փորձի ուսումնասիրությունն իրականացված է (2020թ.)	Կատարված է

	ն դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում		բնույթի որոշ հանցակազմեր՝ համապատասխանեցնելով այն միջազգային չափանիշներին: Ներկայումս Նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ: Հարկ է նշել, որ 2020 թվականին ակնկալվող արդյունք նախատեսող առաջարկությունների փաթեթի մշակումից բացի արդեն իսկ առաջին կիսամյակում արձանագրվում է մի քանի քայլ առաջընթաց:	(համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ոստիկանություն		
34.	Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում	Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան մշակված է:	ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում ձևավորվել և գործում է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության ու դրա հիման վրա կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկայի մշակման հարցերով զբաղվող աշխատանքային խումբ: Մինչև 2020 թվականի ավարտը կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան մշակված կլինի:	ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն Արդարադատության ակադեմիա Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		Կատարված է մասնակի
35.	Կոռուպցիոն հանցագործություն	Կոռուպցիոն հանցագործությունների	ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի և	ՀՀ գլխավոր դատախազություն		Կատարված է

	<p>նների մասին վիճակագրության համալրում</p>	<p>վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության վարման կարգերը մշակված են:</p>	<p>2020 թվականի հուլիսի 2-ի համապատասխան հրամաններով կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը համալրվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների ու կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով:</p>	<p>(համաձայնությամբ) << ոստիկանություն</p>		
36.	<p>Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով</p>	<p>Մշակված է ծրագրային ապահովումը և ծրագիրը ներդրված է</p>	<p>Փոխգործելիության միասնական հարթակը մշակված և ներկայումս գտնվում է փորձարկման փուլում: 2020 թվականի հունիսի 30-ի դրությամբ միմյանց հետ փոխգործելի են ոստիկանության, արդարադատության նախարարության, կադաստրի կոմիտեի, կենտրոնական բանկի, պետական եկամուտների կոմիտեի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության էլեկտրոնային ռեգիստրները, ինչպես նաև առանձին ռեգիստրներ: Իրավապահ մարմինների կողմից էլեկտրոնային եղանակով</p>	<p><< Վարչապետի աշխատակազմ</p> <p>էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)</p> <p><< արդարադատության նախարարություն</p> <p><< բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>		<p>Կատարված է մասնակի</p>

			հարցումների օրենսդրությամբ կարգով կապահովվի պետական էլեկտրոնային դեպքում սահմանված հասանելիություն մարմինների բազաներին:	ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն		
37.	Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում	Առաջարկությունների փաթեթի հիման վրա ստեղծվել է բանկային հաշիվների կենտրոնական ռեեստր:	Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրի առավել արդյունավետ մոդել ստեղծելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարվել են հարցումներ միջազգային գործընկեր երկրների՝ վերջիններիս օրենսդրական կարգավորումների առավել հանգամանալից ուսումնասիրության համար: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ բանկային հաշիվների միասնական ռեեստրի մոդելի մշակման ուղղությամբ:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վերաբերյալ միջազգային փորձն ուսումնասիրվել և քննարկվել է Հակակոռուպցիոն քաղաքականության ն խորհրդում (2019թ.-ի 1-ին եռամսյակ) Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրը ստեղծվել է և գործարկվում է: (2020թ.-ի 2-րդ կիսամյակ):	Կատարված է մասնակի
38.	Կոռուպցիոն հանցագործությունների քննության	Ուսումնասիրվել են կոռուպցիոն գործերով միջազգային	ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել, շրջանառվել և մոտ	ՀՀ արդարադատության նախարարություն	Իրականացվել է կոռուպցիոն գործերով	Կատարված է մասնակի

<p>և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում</p>	<p>համագործակցության իրականացման մեխանիզմները և առկա դրանցում խոչընդոտները</p>	<p>օրերս կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է համապարփակ կարգավորման ենթարկել պետությունների միջև քրեական գործերով միջազգային համագործակցությունը: Սույն համագործակցության շրջանակներում սահմանվել է նորմ, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով սահմանված կարգով իրավական օգնություն ցույց տալու հարցում ստացած Հայաստանի Հանրապետության կենտրոնական մարմինը հարցումն ուղարկած օտարերկրյա իրավասու մարմնի միջնորդությամբ, առանց խոչընդոտելու կամ վնասելու Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի վարույթում գտնվող քրեական գործի քննությանը, նրան է հանձնում այն առարկաները, որոնք օգտագործվել են հանցանքը կատարելիս, այդ թվում՝ հանցագործության գործիքները, առարկաներ, որոնք ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով, կամ ենթադրյալ</p>	<p>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն</p>	<p>միջազգային համագործակցության իրականացման մեխանիզմների և դրանցում առկա խոչընդոտների վերաբերյալ ուսումնասիրություն (2020թ.-ի 2-րդ եռամսյակ)</p>	
---	--	---	---	--	--

			հանցանք կատարած անձը ստացել է որպես փոխհատուցում հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների փոխարեն.			
39.	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:	Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 16-ին երկրորդ ընթերցմամբ ընդունվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» մասին օրենքի նախագիծը: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=142347 հղումով	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ԱԺ (2020թ.-ի 1-ին եռամսյակ)	Կատարված է
40.	Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության միջազգային փորձն ուսումնասիրվել է:	Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության միջազգային փորձն ուսումնասիրվել է:	2020 թվականի մայիսի 21-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագծով ներդրվել է իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտը, և հստակորեն սահմանվել է այն հանցագործությունների սպառիչ շրջանակը, որոնց սուբյեկտ կարող է լինել նաև իրավաբանական անձը: Նախագծի մեկնաբանության	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	«Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը ներկայացվել են	Կատարված է

			<p>արդյունքում, հարկ է նշել, որ կոռուպցիոն հանցագործությունների մեծամասնության սուբյեկտ կարող է լինել հետևաբար և քրեական պատասխանատվության ենթարկվել իրավաբանական անձը: Ինչ վերաբերում է կոռուպցիոն բնույթի այն հանցագործություններին, որոնց համար սահմանված չէ իրավաբանական անձի պատասխանատվություն, ապա անհրաժեշտ է նշել, որ այդ հանցագործությունների դիսպոզիցիայի վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ համապատասխան հանրորեն վտանգավոր արարքը կարող է կատարել միայն ֆիզիկական անձը, և նման կարգավորումները պայմանավորված են այդ հանցագործությունների բնույթով: Ներկայումս Նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ:</p> <p>Հարկ է նշել, որ 2020 թվականի մայիսի 21-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, որով ևս սահմանվել են իրավաբանական անձի պատասխանատվության</p>		<p>ՀՀ վարչապետի աշխատակազմ (2020թ.-ի 2-րդ եռամսյակ)</p>	
--	--	--	--	--	---	--

			ինստիտուտի կառուցակարգեր՝ նախատեսվել է նոր տարբերակված վարույթ՝ իրավաբանական անձի վերաբերյալ, իրավաբանական անձը դարձել է քրեական դատավարության սուբյեկտ: Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք եզրահանգել, որ մի քանի քայլ առաջընթաց է արձանագրվում սույն միջոցառման ընթացքի հետ կապված:			
41.	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում	Իրականացվել է համապատասխան ուսումնասիրություն: Ներկայացվել է առաջարկ առկա օրենսդրական անհամապատասխանությունների և դրանց վերացման առկա հնարավորությունների վերաբերյալ	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել առկա օրենսդրական անհստակությունները, որի հիման վրա կազմվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ: Նախագծով առաջարկվում է կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, իրականացնել ոչ միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու,	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Կատարված է	

			<p>այլև պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու, պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձին, հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալու հանցագործությունների բացահայտման համար՝ բացառապես կաշառք ստանալու, կաշառք տալու, ապօրինի վարձատրություն ստանալու, ապօրինի վարձատրություն տալու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելու կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա:</p>			
--	--	--	---	--	--	--

42.	<p>Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում</p>	<p>Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվում են: Կիսամյակային հաշվետվությունները՝ ըստ սահմանված կարգի ներկայացվել են:</p>	<p>Պետական մարմինների՝ իրենց իրավասության շրջանակներում գործողությունների ծրագրում ներառվելիք միջոցառումների ամփոփման հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության կողմից հաղորդակցման ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագիրը մշակման փուլում է:</p> <p>Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակման շրջանակում սերտ համագործակցություն է իրականացվում տարբեր միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ ՄԱԶԾ-ի հետ:</p> <p>Հանրային իրազեկման արշավի շրջանակներում մի շարք պետական կառավարման համակարգի մարմինների կողմից իրականացվել հետևյալ աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> • Կոռուպցիայի դեմ պայքարը որպես մշտական ուղերձ հատուկ շեշտադրվել են ԿԳՄՍ նախարարի գրեթե բոլոր հրապարակային ելույթներում: • Երևանում հաջողությամբ փորձարկվելուց հետո այս տարի ՀՀ պետական 	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>ՀՀ Վարչապետի աշխատակազմ</p> <p>Պետական կառավարման համակարգի մարմիններ</p> <p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Ձանգվածային լրատվության միջոցներ (համաձայնությամբ)</p>	<p>Հաղորդակցման ռազմավարություն ու համապատասխան գործողությունների ծրագիրը հաստատվել են ՀՀ վարչապետի որոշմամբ (2020թ.-ի հուլիս)</p> <p>Հաղորդակցության մասին կիսամյակային հաշվետվությունները ըստ սահմանված ձևաչափի ներկայացվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին ու հրապարակվել են Խորհրդի ու ՀՀ ԱՆ կայքէջերում (2020թ., 2021թ., 2022թ.):</p>	Կատարված է մասնակի
-----	--	--	---	--	---	--------------------

			<p>հանրակրթական դպրոցներում, որոնք տվյալ բնակավայրում միակը չեն, առաջին դասարանցիների ընդունելությունը ևս կատարվել է առցանց համակարգով: Բոլորի համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու և կոռուպցիոն ռիսկերից խուսափելու նպատակով յուրաքանչյուր ծնող, աշխարհի ցանկացած ծայրից, իր երեխային կարող է առցանց համակարգով գրանցել պետական հանրակրթական դպրոցներում: Գործընթացի իրազեկվածության բարձացման և թափանցիկության ապահովման համար մշակվել և իրականացվել է հանրակրթական դպրոցներում առաջին դասարանցիների ընդունելության օնլայն համակարգի հանրային իրազեկման ծրագիրը, որի շրջանակում՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ԿԳՄՍ նախարարը, ոլորտը համակարգող նախարարի տեղակալը, հանրակրթության վարչության պետը, ԿՏԱԿ-ի տնօրենը թեմայի առնչությամբ բազմաթիվ մեկնաբանություններ և 			
--	--	--	--	--	--	--

			<p>հարցազրույցներ են տվել տարբեր հարթակներում և ՋԼՄ-ներում: Բացի այդ, պատրաստվել է հոլովակ, որը եթեր է հեռարձակվել է Հանրային հեռուտաընկերությամբ, տեղադրվել ԿԳՄՍ նախարարության Ֆեյսբուքյան էջում և կայքում:</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ պաշտպանության նախարարությունը մշակել և ներկայացրել է Հանրային իրազեկման ծրագրի նախագիծը: Շրջակա միջավայրի նախարարության կողմից իրազեկման արշավներ են անցկացվել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ հաղորդաշարերի, գովազդային պաստառների և սոցիալական հոլովակների միջոցով: • Գործում է «Ձեր բնապահպանը» բնապահպանական իրավունքների լուսաբանմանն ուղղված ռադիո թողարկումների շարք, • Երևանում տեղադրվել են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված մոտ երկու տասնյակ սոցիալական տեղեկատվական 			
--	--	--	---	--	--	--

			<p>ցուցապատառներ,</p> <ul style="list-style-type: none"> • Մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը Ազգային ժողովում ընդունվել է առաջին ընթերցմամբ: Օրենքով կատարելագործվում է բնապահպանական կրթության և դաստիարակության համակարգի օրենսդրական դաշտը՝ կարևորելով էկոկրթության դերը համայնքներում: • ՀՀ առողջապահության նախարարության իրվասության շրջանակներում 2020թ. առաջին եռամսյակում իրականացվել են՝ <ul style="list-style-type: none"> • 1) Քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օրվա շրջանակներում (փետրվարի 4) տեղի է ունեցել մամուլի ասուլիս, որի ընթացքում ներկայացրել են ուռուցքաբանության ոլորտում կատարված բարեփոխումները և ընթացիկ ծրագրերը: <ul style="list-style-type: none"> • 2019-2021 թ.թ. քարոզարշավի թեման է՝ «Ես կամ և ես լինելու եմ» և օրվա խորհրդով կազմակերպվել է ցուցահանդես • Մետրոպոլիտենի «Երիտասարդական» 			
--	--	--	--	--	--	--

			<p>կայարանում:</p> <ul style="list-style-type: none"> • 2) Իմունականխարգելման մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնելու, պատվաստումների միջոցով բնակչությանը վարակիչ հիվանդություններից զերծ պահելու նպատակով, ապրիլի 20-ից-26-ը կազմակերպվել է «Իմունականխարգելման եվրոպական շաբաթը» միջոցառումը, որի նպատակն է արժևորել պատվաստանյութերի դերն ու նշանակությունն առողջության և բարեկեցության համատեքստում: • 3) հունվարի 11-ին սուր իշեմիկ ինսուլտի բուժման ծրագիրը և Հայաստանում կաթվածի կենտրոնների հավաստագրման և կարգավիճակի շնորհման ուղեցույցներ»-ի հաստատման հարցը քննարկվել է ՀՀ-ում՝ գլխուղեղի կաթվածի բուժման արդյունավետության բարձրացման և կառավարման համակարգող խորհրդի նիստի ընթացքում: • 4) Լուսաբանվել են Կառավարության 03.04.2004 թ. թիվ 318-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները, 			
--	--	--	--	--	--	--

			<p>որոնց արդյունքում 2020թ. ընդլայնվել է պետական պատվերով մատուցվող</p> <ul style="list-style-type: none"> • ծառայությունները և շահառուների շրջանակը: Մասնավորապես՝ պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող ընտանիքի անապահովության սահմանային միավորը իջեցվել է «28.00», նախկին «30.01»-ի փոխարեն, պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպությունների ֆինանսական դժվարությունները կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված մեղմելու նպատակով մինչև 2020 թվականի հուլիսը պետական բյուջեի մի քանի ծրագրերով թվով 119 ԲԿ ֆինանսավորումը իրականացվելու է կանխավճարային սկզբունքով: • Լուսաբանվել է նաև Կառավարության թիվ 806-Ն որոշման փոփոխությունը, ըստ որի՝ պայմանագրային զինծառայողների ընտանիքների անդամներին համավճարային սկզբունքով նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների 			
--	--	--	---	--	--	--

			<p>կիրառմամբ մատուցվող ծառայություններն</p> <ul style="list-style-type: none"> • իրականացվելու են ամբողջությամբ անվճար: • 2.«Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային • իրազեկման արշավի իրականացման շրջանակներում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները. • 1) 3 սոցիալական հոլովակների պատրաստում և ցուցադրում, • 2) «Ծխելու դեմ պայքարի» ազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է ֆլեշ-մոբ, որի հիման վրա նկարահանվել են թվով 5 սոցիալական հոլովակներ, • 3) միջմարզային և Երևան քաղաքի ներքաղաքային երթուղիներ իրականացնող ավտոբուսների թափքերի գովազդային ձևավորում • 4) միջին չափսի արտաքին գովազդային վահանակների պատրաստում՝ • 5) մեծ չափսի արտաքին գովազդային վահանակների պատրաստում՝ 36 հատ և տեղադրում ՀՀ բոլոր մարզերում 			
--	--	--	--	--	--	--

			<p>և հիմնական մայրուղիներում,</p> <ul style="list-style-type: none"> • 6) բժշկական կազմակերպություններում այցելուների իրազեկման նպատակով պաստառների տպագրություն • 7) զորակոչիկների շրջանում իրազեկում իրականացնելու նպատակով պաստառների տպագրություն • 8) զորակոչիկների շրջանում իրազեկում իրականացնելու նպատակով ցուցապաստառների (բաներների) տպագրություն • 9) Գրաֆիտի նկարների պատրաստում և ցուցադրություն – ընդհանուր 5 նկար, որից երեքը Երևան քաղաքում և մեկական նկար Վանաձորում և Գյումրիում: 			
43.	«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկա:	Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկա:	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանների և <i>առարկայական ծրագրերի</i> մշակման ու հաստատման, ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի և պարբերականության ընտրության, ինչպես նաև	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ԲՈՒՀ-եր Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ	«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի դասավանդման ծրագրերը մշակված են (2020թ.-ի 2-րդ եռամսյակ):	Կատարված է մասնակի

			<p>ուսումնական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակման հարցերը գտնվում են բարձրագույն ուսումնական հաստատության ինքնավարության, իրավասության և ակադեմիական ազատությունների շրջանակում՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին համապատասխան:</p> <p>Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 43-րդ կետով նախատեսված «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառման հարցը բարձրագույն ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում ՀՀ ԿԳՄՍ նախարարության</p>			
--	--	--	--	--	--	--

			<p>08.06.2020թ. թիվ 03/06.2/13727-20 գրությամբ քննարկման է ներկայացվել բուհերին:</p> <p>Համաձայն ստացված տեղեկատվության՝ ԲՈՒՀ-երի մեծ մասում հասարակագիտական առարկաների շրջանակներում արդեն իսկ իրականացվում են հակակոռուպցիոն քաղաքականությանը վերաբերող թեմաներով դասախոսություններ, ուստի «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առանձին առարկայի ներմուծումն ուսումնական պլաններում կավելացնի ուսանողների ծանրաբեռնվածությունը:</p> <p>Միևնույն ժամանակ որոշ բուհեր, մասնավորապես՝ Գավառի պետական համալսարանը, Գորիսի պետական համալսարանը, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանը և Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանը պատրաստակամություն են հայտնել իրենց ուսումնական պլաններում որոշակի</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>ժամաքանակով ներառելու «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան՝ առարկայի դասավանդման համար ծրագիր մշակելուց և կրթական վերջնարդյունքները սահմանելուց հետո:</p> <p>Մինչույն ժամանակ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2020 թվականի հունվարի 20-ի թիվ 03/08.3/841-20 գրությամբ ՆՄՄԿ ուսումնական հաստատություններին հանձնարարվել է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» թեմայով մշակել ուսումնական ծրագիր՝ 2020-2021 ուսումնական տարվանից» Իրավունքի հիմունքներ» մոդուլի շրջանակում պարտադիր ուսուցանելու նպատակով:</p> <p>Հարկ է նշել նաև, որ «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի դասավանդման ծրագրերը մշակված են՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի ուսումնական գործընթացում ներդնելու համար:</p>			
--	--	--	---	--	--	--

44.	Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում	Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է:	<p>Ներկայումս իրականացվում են հանրակրթության պետական չափորոշի, առարկայական ծրագրերի և չափորոշիչների վերանայման աշխատանքները:</p> <p>Հասարակագիտության առարկայական ծրագրերը վերանայող աշխատանքային խմբից կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ առարկայական վերջնարդյունքներում և ծրագրային բացվածքում անդրադարձ է կատարվել հետևյալ թեմաներին.</p> <ol style="list-style-type: none"> 1. Կոռուպցիայի տեսակներին, պատճառներին և հետևանքներին (9-րդ դասարան), 2. Տնտեսական մրցակցությանը, ընտրություններին (ընտրախախտումներին), քաղաքացիական մասնակցության և վերահսկողության ձևերին (10-րդ դասարան), 3. Կոռուպցիայի դեմ պայքարի ձևերին և դրանց արդյունավետությանը (11-րդ դասարան): 	ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն ԲՈՒՀ-եր	«Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացված է, առաջարկությունները ներկայացված են (2020թ.-ի 2-րդ եռմասյակ):	Կատարված է մասնակի
45.	Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների	Անցկացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված պարբերական վերապատրաստումներ,	Արդարադատության նախարարությունն իր իրավասության շրջանակներում Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ		Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

	վերաբերյալ իրազեկվածության և բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության , «Մարդու իրավունքներ» թեմայով	սեմինարներ, միջոցառումներ:	բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով պարբերաբար տարբեր լրատվական հարթակներով ներկայացնում է հաշվետվություններ: Մինևոյն ժամանակ, նկատի ունենալով երկրում արտակարգ դրությամբ պայմանավորված իրավիճակը՝ աշխատանքներ են իրականացվում համապատասխան վերապատրաստումները, միջոցառումները օնլայն հարթակով իրականացնելու ուղղությամբ:	ՀՀ արդարադատության նախարարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		
46.	Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում	Մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ	Քաղաքացիական ծառայողների համար Մարդու իրավունքներ թեմայով մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ՝ 1. Երեխաների իրավունքներ 2. Խտրականության դեմ պայքար 3. Կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ դասընթացի ընդհանուր նկարագիր	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	Քաղաքացիական ծառայության համակարգում հեռահար ուսուցման մոդուլները մշակված են (2020թ.-ի 2-րդ եռամսյակ)	Կատարված է
47.	Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն	Մշակվել են թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման տեխնիկական	Համապատասխան մասնագետների և քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ուսումնասիրվել է թափուր պաշտոնների համալրման	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն	Կատարված է մասնակի

	հեռարձակում	պայմանները	<p>մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգի և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգի միասնականացման գործընթացը:</p> <p>Համապատասխան մասնագետների և քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգի և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգի միասնականացման գործընթացի ուսումնասիրության ընթացքում վեր են հանվել խնդիրներ և նախանշվել դրանց լուծման ուղիները:</p> <p>Ընթացքի մեջ են համապատասխան մարմիններում համակարգի ներդրման տեխնիկական ապահովման և գործարկման աշխատանքները:</p>		<p>հեռարձակման տեխնիկական պայմանները են << վարչապետի աշխատակազմ (2019թ.):</p>	
48.	<p>Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ</p>	<p>Տարեկան կտրվածքով առնվազն 1 անգամ հասարակության շրջանում, այդ թվում՝ Երևան քաղաքում և << մարզերում, իրականացվող հարցման արդյունքում</p>	<p>IRI միջազգային կազմակերպության կողմից 2019 թվականին Երևանում և << մարզերում իրականացված հարցումների արդյունքում ներակայացվել են հանրության կարծիքով պետական ոլորտների կոռուպացվածության</p>	<p><< Վարչապետի աշխատակազմ</p> <p><< արդարադատության նախարարություն Պետական կառավարման</p>		<p>Կատարված է մասնակի</p>

	<p>պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում,</p>	<p>վեր են հանվել հանրության կարծիքով առավել կոռումպացված ոլորտները, առկա կոռուպցիոն ռիսկերը, ներկայացվել է ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հասարակության կարծիքը, քայլեր են ձեռնարկվել ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:</p>	<p>ցուցանիշները, վեր են հանվել դրանց պատճառները՝ ըստ հանրության ընկալման: Երկրում արտակարգ դրությամբ ստեղծված իրավիճակի բարելավման պարագայում կվերագործարկվեն սույն աշխատանքները: Հարկ է նաև նշել, որ ԵԽ Երևանյան գրասենյակի «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակներում իրականացվել է հետազոտություն և հրապարակվել է զեկույց «Ազդարարների պաշտպանության ՀՀ օրենսդրությունը և դրա կիրառելիությունը զինված ուժերում՝ զուգահեռներ միջազգային չափորոշիչների և լավագույն փորձի հետ» խորագրով, որում միջազգային և տեղական փորձագետների կողմից վեր են հանվել այն խնդիրները, որոնք խոչընդոտում են զինված ուժերում մարդու իրավունքների և կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ ազդարարմանը: Ազդարարման համակարգերի արդյունավետության խոչընդոտները բացահայտելու</p>	<p>համակարգի մարմիններ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (Համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (Համաձայնությամբ)</p>		
--	---	--	--	---	--	--

			<p>նպատակով նշված ծրագրի շրջանակներում << պաշտպանության նախարարության 1-ին և 2-րդ ԲԿ ենթակայության զորամասերում իրականացվել էր նաև սոցիոլոգիական հետազոտություն՝ հասկանալու, թե որքանով են զինծառայողները պատրաստ ազդարարել իրենց իրավունքների խախտման կամ այլ չարաշահումների, այդ թվում կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ: Հետազոտության արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են << պաշտպանության նախարարության ղեկավարությանը:</p>		
--	--	--	---	--	--

2020 թվականի առաջին եռամսյակում կատարման ենթակա միջոցառումների քանակը	Ամբողջությամբ կատարված	Մասնակի կատարված	Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է	Չկատարված
47	13 (27.7%)	32 (68%)	2 (4.3%)	0